

ընդունելու հոգևոր կոչման մէջ նարուր Գարալագեաղի դաւառի Փոռ գիւղի բնակիչ Յովակիմ նահապետեանցին և ձեռնադրելու նորան քահ. նոյն գիւղի համար որից ընտրուած է և սպառնալով. ընծայացուն քննուած է թեմ. ատեանում:

— Փետր. 21. Պատուիրել Տփլիսի թեմ. ատեանին ապաշխարութեան ենթարկել Գաւիթ քահ. Գիրգիղեանցին երկու եօթնեակ, իսկ 40 բուրլի պահանջը թողնել անհետեանք, մերժելով միանգամայն թեմ. ատեանի վճիռը՝ յիշեալ քահ.-ին Սեանայ վանքն ուղարկելու եռամսեայ սպաշխարութեան համար:

— Փետր. 28. Պատուիրել Ռուսաստանի Հայոց թեմական ատեաններին, նոցա ենթարկուած հոգևոր կառավարութիւններին, գործակալներին և Մ. Աթոռի վանական կառավարութեան, այսուհետեւ Մ. Աթոռի վանքերի և եկեղեցիների կալուածները և կամ առևտրական շահագործութիւններն ու շինութիւնները աճրդախօսութեամբ վարձով տալու համար՝ նախապէս հրատարակել լրագիրներում և հրապարակական յայտնի տեղերում պատերին յայտարարութիւններ կպցնել:



Կ Ր Օ Ն Ա Կ Ա Ն

ՔՐԻՍՏՈՆԷՈՒԹԵԱՆ ԻՍԿՈՒԹԻԻՆԸ.

Ը.

ԱԻԵՏԱՐԱՆՆ ՈՒ ԱՇԽԱՐՀԸ ԿԱՄ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹԻԻՆԸ:

ԱՍՈՒՄ եւն, թէ Յիսուս ոչ մի անգամ աշխատութեան, յառաջագէտ գործունէութեան յորդոր չի կար-

դացել, և աւետարանի էական թերութիւններից մէկն այն են համարում, որ գիտութիւնն ու արուեստը նորա մէջ գնահատութիւն ամենեւին չեն գտնում, մինչ մեր ժամանակի համար դժբա ամենաբարձր արժէքն ունին՝ ամենամեծ, գաղափարական բարիքն են։ Այդպէս, աւետարանի ամենախիստ քննադատներից մէկն անցեալ դարում՝ Դ. Շարաուս, նորա հնացած և ներկայ սերունդի համար անգործագրելի լինելու ապացոյցը գտնում էր հէնց այդ անտարբերութեան մէջ դէպի քաղաքակրթութիւնն ու յառաջագիւծութիւնը—կրկին նոյն մոլորութիւնը, ինչ որ նախընթաց դլխի մէջ տեսանք. իբր թէ աւետարանը երկրաւոր բաների հետ դործ ունի և պէտք է նոցա իւրաքանչիւրին վերաբերեալ օրէնքներ տայ։ Դորա հետ միանում է նաև մարդոց հին ու անջնջելի մի հակումը՝ ձգել վերայից այն պատասխանատուութիւնը, որին ենթակայ են բարոյական ու հոգեւոր բարձր խնդիրներում ունեցած ներքին ազատութեան շնորհիւ, և որևէ հեղինակութեան հպատակուել։ Եւ յիշուի, աւելի հանգիստ է թէկուզ ամենադաժան հեղինակութեան ներքոյ ապրել, քան ազատութիւն դործ դնել ի բարին։ Բայց մի կողմ՝ թողած այդ՝ մենք պէտք է աշխատենք այն հարցին պատասխանել, թէ արդեօք ճշմարտութեան աւետարանի համար պակասութիւն չէ, որ նորա մէջ քաղաքակրթութեան նշանակութիւնը չի պարզուած։

Կարող ենք ամէնից առաջ հարցի դէմ հարց դնել, ինչ օգուտ կունենայինք, եթէ այդ պակասութիւնը չլինէր։ Աշխատանք, արուեստ, գիտութիւն, քաղաքակրթութիւն որոշ վերացական ըմբռնումներ չեն, այլ ժամանակի մի շրջանի հետ այս կամ այն դրութեամբ գոյութիւն են ունենում և ժամանակի հետ փոփոխուում։ Աւետարանն ուրեմն պէտք է յատուկ մի դրութեան հետ կապուէր ու խճճուէր մնար նորա մէջ։ Իսկ կաթոլիկ եկեղեցին պարզ օրինակ է մեր առաջ, թէ ինչ ասել է կրօնի համար քաղաքակրթութեան որ և է շրջանի հետ այդպէս սերտ կապակցութիւն հաստատելը։ Միջին դարերում հռոմ, եկեղեցին

միջամտում էր քաղաքակրթութեան ու յառաջադիմութեան վերաբերեալ ամէն տեսակ խնդիրներին՝ ուղղութիւն և կերպարանք տալիս նոցա։ Հետեանքն այն եղաւ, որ նա իւր հիմք եղող ճշմարտութիւններն ու իւր իսկական կոչումը աննկատելի կերպով նոյնացրեց այդ ժամանակ ձեռք բերած հայեացքների և սկզբունքների հետ, ու մնաց այդպէս, կարելի է ասել, մեխուած կանգնած այն աստիճանի վերայ, որ միջնադարեան փիլիսոփայութիւնն ու քաղաքատնտեսութիւնը՝ ամբողջ միջնադարեան քաղաքակրթութիւնն է ներկայացնում։ Գորա հակառակ որպիսի մեծ ծառայութիւն է մատուցել և որպիսի հոգեւոր ազատութիւն շնորհել մարդկութեան ճշմարիտ աւետարանը՝ միայն կրօնի էութիւնը հանդէս բերելով և կոմմսակի բըննութեանց մէջ չմտնելով։

Երկրորդ՝ պարզ պէտք է լինի մեզ համար, որ աշխատութիւնն ու քաղաքակրթական յառաջադիմութիւնը խիստ արժէքաւոր բաներ լինելով հանդերձ՝ կեանքի նորատակն ու բարձրագոյն գաղափարը իրենց մէջ չեն պարունակում, հոգու ներքին պահանջներին իրական դոհացում տալ չեն կարող։ Աշխատանքը վայելք է յառաջ բերում, բայց վայելքը կեանքի մի կողմն է միայն, և եթէ լաւ դիտենք՝ կտեսնենք, որ աշխատանքի պատճառած հաճութիւնների մասին աւելի շատ նորա են խօսում, որոնք իրենց անձին առանձնապէս նեղութիւն չեն տուել, մինչդեռ ծանր աշխատանքի տակ գտնուողները բոլորովին ուրիշ կարծիք ունին։ Իրօք մարդոց կատարած աշխատութեան գոնէ $\frac{5}{4}$ մասը ծանր, յոգնեցուցիչ ու անհետաքրքրական չարչարանք է, և այդպէս աշխատողները հանգըստութեան վերայ նայում են իբրև մի տենչալի և երջանիկ դրութեան վերայ, եթէ նորա կամ նոցա մասին դատողներն այդ չեն խոստովանում, կարելի է ազատ կերպով ասելոր կեղծում են։ Եւ ստացած արդիւնքն ինչ է։ Գործը վերջացնելուց յետոյ, երբ որ նայում ես արածիդ՝ խղճիդ վերայ բռն է դառնում, կկամենայիր ոչնչացնել, ուրից անել։—Ասել ուրեմն, թէ ապրում ենք,

երբ աշխատում ենք՝ անտեղութիւն է. ոչ, մենք ապրում ենք, երբ սէր ենք վայելում և ինքներս սէր ցոյց տալիս։ Զուր չի պնդում Ֆաուստը, թէ միայն աշխատելու համար կատարած աշխատանքը զգուելի կլինի ի վերջոյ։ «Կեանքի աղբիւրին ենք փափագում մենք, ախ, կեանքի աղբիւրին»։

Աշխատանքը մի անհրաժեշտ լծակ է կեանքի ծանրութիւնները վերցնելու՝ խիստ դնահատելի միջոց նորան շարժում և թարմութիւն տալու համար, բայց բացարձակ բարիք չէ, ու ոչ հաւասարաբեք մեր միւս դադափարական բարիքների։ Նոյնը պէտք է ասել քաղաքակրթական յառաջադիմութեան համար։ Այն, ինչ որ մեր աչքում յառաջադիմութիւն է այժմ, մեզ ուրախացնում է և ոգևորում, վաղը մեքենայական անտարբեր բան կդառնայ։ Խոր զգացող մարդը շնորհակալութեամբ ընդունում է իրերի յառաջադիմական դարդացման շնորհները, բայց գիտէ, որ դոցանով լուծումն չեն ընդունի ներքուստ իրեն զբաղեցնող հարցերը և հաղիւ թէ փոփոխութիւն լինի իւր այդ ներքին դրութեան հիմնական պայմանների մէջ։ Մեզ միշտ այնպէս է թուում մի առժամանակ, թէ բաւական է այսօրինչ նոր բանը տեղի ունենայ, և մենք կթեթեւանանք, սակայն քանի մարդս ծերանում է և աւելի խոր թափանցում կեանքի մէջ՝ տեսնում է, — եթէ հարկաւ նա իւր սեփական ներքին աշխարհն ունի, որ իրերի արտաքին ընթացքը կամ քաղաքակրթական յառաջադիմութիւնը նորան առանձին ոչինչ չի տալիս։ Նա տեսնում է իրեն կրկին հին տեղում և ստիպուած նոյն ոյժերը որոնելու, որոնց հետամուտ էին նախնիք, կարիք է զգում Յաւիտենականի և Սիրոյ թագաւորութեան մէջ իւր համար տեղ պատրաստելու և սկսում է շնորհակալ լինել Փրկչից, որ այդ թագաւորութեան մասին միայն վկայել և ուսուցանել կամեցաւ։

Նկատել պէտք է վերջապէս երրորդ, որ Յիսուս իւր քարոզութեան դէպի առաջ նկրտող բնաւորութիւնը գիտէր և ապահով էր, թէ ոչ մի արդելքի հանգէպ կանգ չպիտի առնէ, ուստի առանձնապէս շեշտել է այդ

կողմը: «Եկել եմ մի կրակ վառելու երկրի վերայ և — կցում է իսկոյն—կկամենայի, որ արդէն բոլորքած լինէր»: Դատաստանի կրակն ու սիրոյ ամբողջ զօրութիւնը կամենում էր Նա ի մի բերել, որպէս զի մի նոր մարդկութիւն ստեղծէ: Թէպէտ Նա սիրոյ այդ զօրութեան արտայայտութիւնները շատ հասարակ գոյներով էր պատկերացնում՝ յարմարեցնելով շրջապատի սլարդ կեանքին—քաղցածին հաց տալ, մերկին զգեստ, հիւանդին ու բանտարկեալին այցելել—, կասկած չկայ այնուամենայնիւ, որ փոքրիկ Պաղեստինն այդ գէպքում մի հայելի էր միայն, որի մէջ Նա տեսնում էր մի հսկայական ներքին յեղաշրջումն համայն մարդկութեան: Եւ այս մարդկութեանը Նա խօստանում էր արդարութեան, սիրոյ և խաղաղութեան թագաւորութիւնը, որ պէտք է երկնքից գար, բայց երկրի վերայ հաստատուէր,—նչ իբրեւ վայելքների մի դրախտ, այլ իբրեւ մի այգի, որի համար Աստուած մշակներ է որոնում, և այնտեղ գործ են դնում ամէնքը, որ մինչև այժմ հրապարակի վերայ պարտապ կանգնած էին: Այդ թագաւորութեան մէջ իւրաքանչիւր ոք իւր յատուկ կոչումն ունի, իւր տաղանդն է ստացել, որ պարտաւոր է շահեցնել ու արդիւնաւորել. իսկ եթէ թաղէ մի տեղ ու անօգուտ դարձնէ՝ ամենաժանր դատաւարութեան է արժանանում: Այստեղ ևս գործ է պահանջուում ուրեմն՝ ամենօրեայ անդուլ աշխատանք, արդիւնաւորութիւն և յառաջադիմութիւն, բայց ամէն ինչ Աստուծուն ծառայելու և ընկերին օգնելու համար կատարուած: Յաւիտենական մի սկզբունք լոյս է սփռում մարդոց բոլոր արարքների վերայ և ամէն մէկին իւր իսկական նշանակութիւնը տալիս, շատ բան, որ աշխարհի մէջ գործ էր համարուում և մեծ գործ, այստեղ արժէքը կորցնում է և իբրեւ սարապութիւն նկատուում, և գնահատուում են ընդհակառակն բաներ, որ այնտեղ ամենեւին աչքի չէին ընկնում:

Այսպէս ահա տեսնում ենք կրկին, որ ոչ թէ մենք պէտք է պահանջներ դնենք ու մեր ուղած փոփոխութիւնները մտցնենք աւետարանի մէջ՝ այս կամ այն դրու-

Թեան յարմարեցնել աշխատելով, այլ ինքներա պէտք է սովորենք նրանից և մեր աշխարհային գործերն ու ձգտումները նրան յարմարեցնենք: Նա մեզ սովորեցնում է, թէ մարդկութեան բուն աշխատանքն ինչ պէտք է լինի, և մենք փոխանակ նորա տեղ մեր քաղաքակրթութիւնը դնելու, պէտք է հետամուտ լինենք, որ այդ աշխատանքը գլխաւոր և կենտրոնական տեղը բռնէ մեր քաղաքակրթական յառաջագիմութեան մէջ: «Քրիստոսի յայտնութիւնը», ասում է մեր ժամանակի մի պատմաբան, «ամէն բարոյական քաղաքակրթութեան միակ հիմքն է, և նայելով թէ ինչ չափով է ազդեցութիւն գործում այդ յայտնութիւնը՝ ըստ այնմ և կզօրանայ կամ կթուլանայ ազգերի բարոյական քաղաքակրթութիւնը»:

Կ. Վ.



Ի՞նչ ՊէՏՔ Ե ԿԱՐԴԱՆ Ս. ԳԻՐԲԸ*.

Այն հարցը, թէ ինչպէս պէտք է կարգաւ և ուսումնասիրել Ս. Գիրքը, նոյնքան կարեւոր է, որքան՝ իւրաքանչիւր գործի յաջողութեան համար կարեւոր է սկսելուց առաջ որոշ ծրագիր կազմելը: Այս խնդրում թէ հաւատացողները և թէ չհաւատացողները պէտք է գնան միևնոյն ճանապարհով, եթէ ցանկանում են հասնել իրենց գլխաւոր նպատակին՝ Ս. Գրքի ընթերցանութեան և ուսումնասիրութեան ձեռնարկելով:

Ի՞նչ է ցանկանում հաւատացողը: Նա հաւատում է,

* Նեպլիւկի „Что есть истина“ գրքից: